



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ատեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17/63

191.

Պայմանագիր բար յերկըների, միացեց

լունը միություն և -միությունը ույժ


Գյուղատնօտական սերա

Պատական ապահովագրությունը՝  
Առավելացիա չեւ վոր իրազործում և փոխա-  
դարձ ոգնությունը,  
Շամիկ և, վոր ոգնության և գալիս կարեք  
ճամանակ,  
Շամիկ և, վոր կուվում և բնության և ուրիշ  
փորձանքների դեմ:

# Ի՞նՉ Ե ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Խազմ. Ա. Ա. - Փ.

Խամբ. Ա. Գառամյան



ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԹԵՏԱՄԻ

1924 թ.

Ճ Ե Ր Ե Վ. Ա. Դ.

8841

368.5  
h-51 4

368.03

Պրոլետարիա բոլոր լերկրների, միացնք  
Ազահովագրությունը միություն և—միությունը՝ ուժի

Գյուղատնեսական սեփա

Կտորակն ապահովագրությունը՝  
Առավերացիա չ'ու վոր իրազործում և փոխա-  
դարձ ոգությունը.

Բանի և, վոր ոգնության և գալիս կարիքի  
ժամանակ.

Բանակ և, վոր կովում և ընության և ուրիշ  
փորձանքների դեմ:

## ԻՆՉ Ե ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

1924

ՏԵՐԵՎՈՐ

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

2001

Կազմ. Ե. Վ. — Փ.

Խոմք. Ա. Դարամյան

2010

31653-ԱՀ

Պետական ապահովագրությունը հայաստանում շատ նոր գործ է. նա իր պատմությունը չունի: Հայպետապը վորոշել է նրատարակել եժանազին փոքրիկ գրքույկներ, ժողովրդական պարզ լեզվով, վոր ամենքը լավ հսկանան թե ինչ բան է ապահովագրությունը և ինչ ոգուտներ և տալիս աշխատավոր գյուղացուն:

Ծուռով կը տպագրվի Հայպետապի մեկ ու կես տարվա մանրամասն զործունեյության զեկուցումը և հաշիվը:

Հայպետապ



14710-58

Հ. Օ. Տ.

Ի՞նչ ԲԱՆ Ե ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ\*)

ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԴԺԲԱԽՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԺԱՄԱՆԱԿ

Աշխատավոր գյուղացին սեվ որվա համար  
հետ զցած փող չի ունենալ: Նա այնպիսի մի-  
ջոցներ չունի, փոր կարողանա ամեն դժբախտու-  
թյունից ինքն իրեն ապահովել:

Գյուղացիների մեծ մասը թույլ տնտեսու-  
թյուն ունի, այսինքն՝ հաղիվ կարողանում է  
ծայրը-ծայրին հասցնել:

Իսկ ամեն տեսակի փորձանքներ նրա գր-  
խից անպակաս են:

Մեր գյուղացու մեծ թշնամին կարկուան  
և: Շատ անգամ դրա մասին մոռանում են, վո-  
րովհետեւ մի տեղ շատ ե լինում, մի տեղ քիչ:  
Բայց վորքան ել քիչ լինեն կարկտի դեպքերը,  
նրա տված միասները մեկտեղ հաշված միշտ ել  
խոշոր են լինում: Ահազին տարածությունների  
վրա կարկուաը վչացնում ե բույսերը:

Ժամանակ ե լինում, վոր նա ամբողջ ցա-

\*) Սույն գրքույկը կազմելիս ոգտվել ենք Մա-  
լախովսկու «Строховик» գրքույկից:

քսըն և վոչնչացնում և գյուղացուն առանց սերմացուի թողնում:

Հենց որինակի համար վերցնենք Խորհրդային Հայաստանը:

Մեզ մոտ կարկուտը ամեն տարի իրար վրա 9-10,000 գեսատին ցանքս և խփում։ Իսկ այս տարի նա մեզ չտեսնված վնաս տվեց։

Եջմիածնի գավառում 30 գյուղի ցանքս սերից խփել ե 4560 գեսատին, վորից 3000-ը հացահատիկ և, 1150-ը այգիներ, 270 բամբակ և 140 զանազան ուրիշ ցանքսեր։

Անեփանավանի (նախկ. Զալալ ողլի) 2րջանում խփել ե 22 գյուղի 2520 գեսատինը—2170 դ. ցորեն գարի, 6 դ. բամբակ և 344 դուրիշ բույսեր։

Նոր-բայազետի գավառում խփել ե 26 գյուղի 1950 գեսատին հացաբույսերը,

Վարաքիլիսելը ցշանում 20 գյուղի 1350 գեսատինը—1150 դ. հացահատիկ, 50 դ. այգի և 155 դ. այլ բույսեր։

Դիլիջանի գավառում 27 գյուղի 1180 գեսատինը—1020 ը հացահատիկ, 37-ը այգի և 123 դ. զանազան այլ բույսեր։

Լենինականի գավառում 26 գյուղի 940 գես., վորից 860 հացահատիկ և 80 դ. այլ բույսեր։

Յերեվանի գավառի 27 գյուղի 810 գեսատին հացահատիկը։

Զանգեզուրի գավառի 28 գյուղերի 750 գեսատինը—վորից 690 գես. հաց, 50 գես. այգի և 10 ուրիշ բույսեր։

Դարալազյազի գավառում 9 գյուղի 240 գեսատին ցանքսը—վորից 220 դ հացաբույս, 16 դ. այգի և 4 դ. բամբակ։

Ընդամենը հայաստանի 9 շրջաների 215 գյուղերի մոտ 11,870 գես. հացահատիկի ցանքսն և կարկուտի տակընկել, 1290 գես. այգիները (խաղողի և պտղատու ծառերի), 280 գես. բամբակը և մոտ 840 գես. ուրիշ բույսերի ցանքսը (լոբի, կանեփ, վարսակ և այլն)։

Ուրեմն այս տարի կարկուտը խփել ե 14,280 գես. ցանքսեր։

Իրար վրա հաշվելով՝ հայաստանը այս տարի կորցրել ե

260,000 փ. ցորեն, վոր կարմէ 442,000 ը.

55,000 փ. խաղող և միրգ « 73,000 »

5,000 փ. բամբակ « « 25,000 »

Ընդամենը 540,000 »

Պետակը ապահովագրել ե ընդամենը 200,000 գեսատին, վորից 10,000 խաղողի և պտղատու այգիներն են։

Հայաստանի ժողովրդի հողից ստացած տարեկան ամբողջ արդյունքը, բերքը, կարժենա՞	
Ցանքաբերից	13.500.000 ր.
Այգիներից	3.000.000 ր.
Բամբակից	3.500.000 ր.
	<hr/> Ընդամենը 20.000.000 ր.

Սրանից մենակ կարկուտը խփել տարել է 540.000 ր., զոր հավասար է 320.000 փ. հացի։ Յեթև հաշվենք, զոր մի մարդ տարեկան ուտում է 10 փութ հաց, կը նշանակի միայն կարկուտի յերեսից մենք այս տարի 32.000 մարդու հացն են կորցրել։

Բա անասուների կոտորածը։ Մինչև պատերազմը զանազան հիվանդություններից, գայլերից, և ուրիշ դժբախտություններից ամեն մեկ 100 դուխ տավարից 3-ը փչանում եր։

Պատերազմից հետո հիվանդությունները (մանավանդ չուման) շատացան, կերը բիշ լինելու պատճառով նրանք նվազեցին, ժողովրդի ձեռքին զենք չլինելուց զայլերը շատացան և կոտորվող անասունների թիվն ել ավելի մեծացավ։

Իսկ անասունը գյուղացու տան-անտեսության ոյտնն ե. առանց նրան գյուղացին չի կարող յոլա գնալ։

Յեզ, դեռ ինչքան ուրիշ փորձանքներ ել կան, զոր քանդում են գյուղացու կարողությունը և խլում են նրա աշխատանքի արդյունք։ Ի՞նչպես պետք է կովել, պաշտպանվել այդ պատճենաների, աղեաների դեմ։

Պետք է ապահովագրել—ցանխերը՝ կարկից, անասունները՝ կոտորվելուց, տունը՝ կրակից։

Դրանով գյուղացին կը փրկվի կործանվելուց։ Պետական ապահովագրությամբ նա կարող է առանց վախենալու, վսահ նայել վաղվա որդիան, և համարձակ կերպով իր տնտեսությունը շինել ու զարգացնել։

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԴԱՐՁ ՈԴՍՈՒԹՅՈՒՆ Ե

Շատերը, նույնիսկ ավելի ուսում առած ու հասկացող մարդիկ, չփոտես ինչնեւ, կարծում են, թե ապահովագրությունը տուրք եւ։

Այսպես սխալ մտածելով՝ նրանք հեռու յեն մնում ապահովագրությունից և գրանով ել իրենք-իրենց վնասում։

Միութենական կենտրոնական Փորձադիր կոմիտեյի նախագահ—ինչպես նրան ասում են «ստարատան»—ընկ. Կալինինը ասել եւ։—

«Գյուղական ապահովագրությունը պար-

տաղիր, ստիպողական գարձնելը նրան տուրել  
կերպարանք ե տալիս: Բայց, ինկապես, տուր-  
քի և ապահովագրության վճարի մեջ շատ խո-  
շոր տարբերություն կա:

Այդ տարբերությունն այն է, զոր հավաք  
ված տուրքերի փողը պետությունը ծախսում է  
ընդհանուր—պետական գործերի վրա. որինակ,  
խոշոր կամուրջներ ե շինում, քանդված յեր-  
կաթուղիներն ե նորոգում, դպրոցներ, հիմն-  
դանոցներ ե պահում և այլն:

Դրանց ոգուտը գյուղացին տեղն ու տեղը  
չի տեսնում:

Իսկ ապահովագրությունից հավաքած փո-  
ղերը ելի հետ և տալիս գյուղացուն՝ դժբախտու-  
թյունից նրան մի վնաս պատահելիս: Ուրեմն  
զրա ոգուտը գյուղացին (ապահովագրողը) իր աշ-  
քով տեսնում ե և իր ձեռքերով շոշափում:

Կուլակները, հարուստները, բանվորացու-  
դացիական պետության թշնամիները մարդկանց  
ժաքերը պղտորելու համար լուրեր են տարա-  
ծում, թե ապահովագրությունը գյուղացու տան,  
ցանքսի և անասունի վրա դրված նոր հարկ է:

Նրանց համար իսկի տուրեկան չե, զոր պե-  
տությունը իր ձեռքն ե առել դժբախտության  
**ժամանակ** վնասված գյուղացուն ողնելու դորձը:

**Նրանք** շատ կուղենալին, զոր պետական

ապահովագրությունը ջուրն ընկնի, վորպեսզի  
կարկախից, անասունի չումալից և ուրիշ պատա-  
հարներից վնասվող քյասիք գյուղացին ճարը  
կտրած իրենց դուռը գնա, վիզը ծոփ, արտ ու  
տփը իրենց մոտ գրավ դնի և ինքն ել վերջը-  
կերջը մշակության մասնի, բատրակ դաւնա:

Ամեն մի խելքը զիխին գյուղացի պետք ե  
լով հասկանա և իր հարեվանին ել հասկացնի  
այդ տեսակի բամբասանքների նպատակը և  
չթողնի, զոր իրեն հիմարի տեղ դնեն:

Պետք ե ամենքը իմանան և միաները պա-  
հեն, զոր բանվոր գյուղացիական պետությունը  
ապահովագրության միջոցով գյուղացու փոխա-  
դարձ ոգության գործն ե զլուխ բերում:

Ինչ զոր գյուղացին վճարում ե իր մալ-  
մուլքը ապահովագրելու համար, պետությունը  
նորից հետ և տալիս՝ գյուղին զորե և փորձանքից  
հասած վնասը ծածկելով:

Ի՞նչՊԵՍ ԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՊԱՀՈ-  
ՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ ՀԵՂԱՓՈՌԽՈՒԹ-  
ՅՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ:

Առաջ վոչ թե ոգնություն եր, այլ օահի աղբյաւր:

Վաղուց մարդիկ հասկացել են, վոր ապա-  
հովագրության միջոցով պետք ե իրենք իրենց  
ունեն:

Հանգանակությունն ու ոգնելու մեկ ձեռ և  
և նա կար սրանից հազար տարիներ առաջ:

Յեթե մեկի ցանքոը բերք չտար, անսասունը  
սատկեր կամ տունը վառվեր, ուրիշները իրար  
մեջ փող եյին հավաքում և նրան ոգնում.

Բայց վերջը մարդիկ տեսան, վոր հանգա-  
նակությունը շատ թիչ ոգուտ ե տալիու: Նախ  
վոր հանգանակությունը շոււա գլուխ չի գա. բայց  
այդ՝ յեթե հանկարծ մի ամբողջ զյուղի ցան-  
քուրը փչանան, կամ վողջ զերը վառվի, հանգա-  
նակությամբ ցավին դարձան անել չի կարելի:

Սրա համար ել սկսեցին, առանց սպասելու  
գործանքի, դժբախտության, առաջուց միջոցներ  
հավաքել, վոր պատրաստի դրամագլուխ լինի՝  
շուտ ոգնություն հասցնելու համար:

Այսինքն՝ մարդիկ սկսեցին կազմակերպել  
ապահովագրության գործը: Առաջ եկան զանա-

զան ապահովագրական ընկերություններ, վո-  
րոնք եղ գործով եյին պարապում:

Ցարական Ռուսաստանում, մինչև հեղա-  
փոխությունը, ապահովագրություն կատարում  
եյին զեմստվոները, քաղաքային ինքնավորու-  
թյունները և փողատերերի կազմած փայովի  
մասնավոր ընկերություններ:

Այն ժամանակ իշխանությունը կալվածա-  
տերերի և կապիտալիստների ձեռքին եր: Ապա-  
հովագրության գործն ել նրանք եյին դավթել  
և իրենց համար վաստակի մինոր միջոց գործել:

Պետական մեկ ամբողջ ապահովագրություն,  
ինչպես հիմա յե, չկար: Ցարի մինիստրների  
հոգուը չեր աշխատավոր ժողովրդը: Նրանք իրենց  
խաղեյինների (հարուստ—զորբաների) կամքն ե-  
յին կատարում միայն. իսկ այդ խաղեյինները  
ամեն մի գործի մեջ ամենից առաջ իրենց  
ոգուտն եյին փնտրում, վոր հարստությունն  
ավելացնեն և իրենց ձեռները տաքացնեն: Ժո-  
ղովրդի ցավերի ու կարիքների հետ նրանք հա-  
շիվ չունեյին:

Դրա համար ել նրանք աշխատում եյին  
ապահովագրությունից ինչքան կարող են մեծ  
վաստակ (շահ) ստանալ: Մի քանի փողատերեր  
դրամագլուխ եյին մեջտեղ դնում, փայովի

(բաժնետիրական) ընկերություն կազմում ու գործի անցնում:

Առաջին անգամ այդպիսի ընկերություն քեղել է սրանից մոտ 100 տարի առաջ: Մինչև վերջին պատերազմը դրանց թիվը բավական շատացել եր: Նրանք ամեն տարի 200 միլիոնից ավելի փող երին հավաքում ապահովագրության անունով, բայց ինչ ելին անում այդ փողերը:

Դրանք գլխավորապես ապահովագրում եյին հարուստների աները, նույնիսկ տան սարք՝ ու կարգը, խանութների և պահեստների ապրանքները, մինչև անգամ ապակիները, իրենց՝ հարուստների կյանքը և այլն:

Իսկ աշխատավոր գյուղացու, ռանչպարի ցանքն ու անասունը չեյին ապահովագրում:

Ինչու:

Վորովհետև խեղճ գյուղացու ունեցածը ապահովագրելու համար նրանք պիտի այնքան փող վերցնելին, փոր գյուղացու ուժը պատեր տալ:

Իսկ տա նրանց հաշվին չեր զալիս: Յերկրորդ, նրանք, այդ ընկերությունները, շատ ժարդիանց հետ պիտի գործ ունենային, այսինքն ավելի շատ գլխացավանք պիտի բաշելին:

Յերրորդ՝ փորքան ապահովագրողները շատ լինելին, այնքան ել վնասները կարող ելին շատ ինել և ընկերության փողերը կուլ տալ:

Չորրորդ՝ հենց այն, վոր ռանչպարի քասիթություններ հարստին ձեռնտու յեւ ուրեմն նրանք շահ չունելին, վոր իրենց ձեռքով աղքամ գյուղացուն ոգնություն հասցնելին:

Մյուս կողմաց՝ են փողը, վոր նրանք պիտի ստանային, յենթագրենք, 1000 ազգատ գյուղացուց, կարող ելին հանգիստ ստանալ 10 հարուստից, կալվածատերից:

Ել ինչ հաշվիվ կար «անցավ գլուխը ավետարանի տակ գնել» և 10-ի տեղ 1000 հոգու գարզը քաշել:

Շատ քիչ ընկերություններ ցանքսերը կար կտից ապահովագրում եյին, բայց դա յեւ այնտեղ, վորաեղ կարկուտ շատ քիչ եր լինում (Ռուսաստանում) և այն ել միայն կալվածատերերինը: Վճարները այնքան մեծ եյին, վոր հասարակ մահկանացու գյուղացին մոտ գնալ չեր կարող:

Նախկին Ռուսաստանում, գյուղերում, ապահովագրությունն անելը հանձնված եր զեմսավոներին: Բայց զբանք ել, կազմված լինելով մեծ ժամանք հարուստներից և կուլակներից, ավելի շատ սրանց շահերն ելին պաշտպանում և ժողովրդի համար ոգտակար գործ անել չկարողացան:

Զեմստվոնների մեջ ամբողջ ժողովուրդը ձայն

չուներ, այստեղ միայն «ընտրյալներն» եյին  
բազմած:

Այսպիսով տեսնում ենք, վոր նախկին Յա-  
րական Ռուսաստանում աշխատավոր գյուղացին,  
իսկական ժողովուրդը՝ ապահովագրությունից  
վոչ մի ոգուտ չեր կարող սպասել:

## ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒ- ԹՅՈՒՆԸ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵջ

Այժմ մասնավոր բաժնետիրական (փայտվի).  
սպահովագրական ընկերություններ չկան:

Ապահովագրության ամբողջ գործը պետու-  
թյունը իր ձեռքն ե վերցրել, Մենակ նա յե-  
կատարում ամեն տեսակի ապահովագրություն.  
գյուղացու ցանքսերը, անասունները, կոռալերա-  
տիվների խանութներն ու ապրանքները, յերկա-  
թողու և շոգենավերի բեռները, մարդկանց  
կյանքը, տները և այլն.

Հիմա ապահովագրությունը իսկապես վոր  
ժողովրդին ոգնելու գործին ե ծառայում և վճ-  
թե առաջվա նման շահ ու վաստակի հետեւից  
ընկնում:

Հիմակա ապահովագրությունը մի գանձա-  
նակ ե, վորտեղ ամեն մեկը կոռալեներ ե գցում,

վորձանքի, զմբաղտության ժամանակ զնասվո-  
զին բուրլիներ առլու համար:

Խորհրդային իշխանությունը բանվորագյու-  
ղացիական Պետությունը կազմելիս՝ առանց  
կազմիութիւնի (գրամատեր) և կալվածատերի  
(խոշոր հողատեր) յօլա գնաց:

Այդպես ել նա արակ ապահովագրության  
ամամանակի:

1921 թվին Ռուսաստանի Տվեր նահանգի  
վեսյեգոնի գավառի գյուղացիները դիմել եյին  
վնկ. Լենինին և խնդրել եյին, վոր ապահովա-  
գրություն կազմակերպեն:

Ընկ. Լենինը խսկույն պետք յեղած կար-  
գիգրությունն արեց և 1921 թ. հոկտ. 6-ին  
հրատարակեց Պետական Ապահովագրության  
գեկրետը:

Այդ գեկրետով Ապահովագրության ամբողջ  
դորձը հանձնված է հատուկ մի հիմնարկության՝  
Պետական Ապահովագրության Գլխավոր Վար-  
չության, վորը կրթատված ձեռվ կոչում ենք  
Պետական:

Գլխավոր Պետական Մոսկվայումն է: Ամեն  
մի հանրապետություն և նահանգ ունի իր Պե-  
տական գրասենյակը, վարչությունը:

Անդրկովկասի խորհրդ, հանրապետություն-  
ուելն ամեն մեկը իր Պետական ունենալուց բացի,

կա նաև Պետապի Անդրկովկասյան Վարչությունը,  
վորը Թիֆլիսումն ե գտնվում:

Գլխավոր Պետապը 2<sup>1/2</sup> տարվա մեջ արգեն  
բավական մեծ զործ ե կատարել: Հիմա Ռուս-  
սաստանի բոլոր նահանգներում մտցրած ե շեն-  
քերի պարտադիր ապահովագրությունը կրակից:

Իրակը՝ հրդեհը Ռուսաստանի գյուղերի  
համար մեծ չարիք ե, նրան «կարմիր անբար»  
են ասում: Նրանից առև գյուղացին այնպիս և  
վախենում, ինչպես մեր գյուղացին կարկախց  
ու չորությունից:

Առաջ անասունների ապահովագրություն  
համարյա չկար, այժմ կա 48 նահանգներում,  
իսկ 4 նահանգում կա նաև ձիերի պարտադիր  
ապահովագրություն:

Յանքսերի ապահովագրություն կարկախց  
մտցրած ե համարնում:

Հայոստանում Պետական ապահովագրու-  
թյան (Հացակետապի) գործը կազմակերպված  
ե 1923 թ. հունիսից:

Անինից առաջ կատարված ե Յերեվան  
Լենինական, Վաղաշապատ, Դարաքիլիսա քա-  
ղաքներում և Վարանցովկայում տների  
և կոմոնտեսության խանութի շենքերի պար-  
տադիր ապահովագրությունը կրակից:

Հայոստանի Ժողկոմիորնի և կենտրոնաց կո-

մի այս տարվա մարտի 28-ի գեկը ետով կազմա-  
կերպվեց նաև բուսական մշակույթների (այ-  
սինքն ամեն տեսակ ցանքսերի, այգիների և  
ուղարտեղների) պարտադիր ապահովագրություն  
կարկախց:

Ապահովագրությունները կատարվում են  
նույնպես կամավոր կերպով, որինակ՝ ցանքսերը  
կարկախց, անասունները սատկելուց և փչանա-  
լուց, մարդու կյանքը դժբախտություններից  
և մեռնելուց, շենքերը՝ կրակից, աղբանքներն  
ու բեռները՝ վառվելուց, գողանալուց կամ  
կորչելուց և այլն:

Հավանական ե, վոր շուտով կլինի անա-  
սունների պարտադիր ապահովագրություն:

Հայպետապը ամեն մի գավառում և խո-  
շոր գավառամասերում իր գավառական և շր-  
ջանային գործակալներն ունի: Այժմ գրանց  
թիվը հասնում է 14-ի:

Գործակալը մեծ պարտականություններունի:  
Նա պետք ե ճանաչի ապահովագրողներին,  
ուրեմն միշտ պետք ե շրջի գյուղերը:

Պետք ե ապահովագրական թերթիկները  
կազմի, վորոնց մեջ ցույց ե տրվելու թե ինչ-  
քանով են զնահատված անասունը, ցանքը և  
այլն:

Այդ թերթիկներից նա պետք ե կազմի

տեսառերերի ցուցակները և ամենքին տեղեկացնի, թե ով և ինչքան պիտի վճարի:

Դժբախտության, պատահարի ժամանութեալ պետք ե գնա վնասները տեսնի և չափի, արձանագրություններ կազմի և վնասները տա: Նաև պարտավոր ե ամենքին ասել բացառութեալ ապահովագրության նպատակները, կանոնները, որենքները:

Երջանային կամ գավառուկան գործակալի սխալ կամ անիրավացի գործերի համար պետք է հայտնել Հայպետապին:


Հայպետապի գրասենյակը դեկավարում և ապահովագրության ամբողջ գործը Հայաստանում և հետեւում ե գործակալների աշխատանքներին:

Այսպիսի խոշոր և միատնսակ ապահովագրություն ամբողջ աշխարհում վոչ մի տեղ չկա:

Ուրիշ յերկներում գեռ վոչ մի կառավարություն իր գյուղական ժողովրդի ունեցվածքը ամեն կողմից ապահովելու գործը զլուխ չլրերել:

Թե ապահովագրության ինչ տեսակներ գոյություն ունի ներկայիս կը պարզենք և ՀԱՊահովագրության Տեսակները՝ գրքույկում:

2013



ԳԻՆՆ Ե' 5 ԿՈՊ.

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀԱՅՈՒՏԱՎԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ի՞նչ և Պետական Ապահովագրությունը: 5 լ.
2. Պետական Ապահովագրության տեսակները: 5 »
3. Պետապղը ի՞նչ և վերցնում գյուղացուց և ի՞նչ  
և տալիս նրան: 5 »
4. Ի՞նչպես գիտք և վերաբերվել Պետապղին:  
Ապահովագրության գլխավոր կանոններ 8 »
5. Հայպետապղը ի՞նչ և արել և ի՞նչ ունի անելու  
գյուղում: 6 »

368  
Հ-24